ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 89-Ա

08 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական ընտրությունների անցկացման համար տեղամասային կենտրոն է սահմանվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի մանկապարտեզի շենքը, հասցեն՝ 1-ին փողոց, թիվ 29, որը գտնվում է գյուղի կենտրոնում, կենտրոնական փողոցին կից և որևէ մեկի կողմից չի շահագործվում /չկա որևէ ռիսկ ընտրական գործընթացի վրա ազդեցության/, գտնվում է պատշաճ ու կահավորված վիճակում, իսկ ինչ վերաբերում է Լանջիկի միջնակարգ դպրոցի շենքին տեղամասային կենտրոն սահմանելու վերաբերյալ, ապա այն չի համապատասխանում սահմանված պահանջներին /թեքահարթակի բացակայություն և այլն/, բացի այդ Ծովիկ Հովհաննիսյանը՝ դպրոցի նախկին տնօրեն, տնօրենի պաշտոնի հավակնորդ, հանդիսանում է Անի համայնքի ավագանու անդամի թեկնածու, ով ներկայացնում է ռիսկ ընտրական գործընթացում ընտրողների վրա ընտրատեղամասում ազդեցություն գործելու հարցում և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը ժամանակավորապես, մեկ ամիս ժամկետով սահմանել.
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի մանկապարտեզի շենք, հասցեն՝ բնակավայր Լանջիկ 1-ին փողոց, թիվ 29:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրում տեղամասային ընտրական կենտրոն սահմանել.
<<Լանջիկի համայնքային կենտրոն>>-ը, հասցեն՝ Լանջիկ բնակավայր, 2-րդ փողոց, 29 շենք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ -11 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԱՐՍԵՆՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

Բ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՆԱՋԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

Զ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. ՎԱՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Մ. Դարբինյան

2022 թվականի սեպտեմբերի 08
Քաղաք Մարալիկ